# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

*«ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-18/8» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով իրականացվող գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ամփոփման նիստ*

ք. Երևան 26 փետրվարի 2018թ. Ժամը 16:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ | Հ. Արչունց |
| Գնահատող անդամներ (ԳԱ)՝ | Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան |
| Բացող անդամներ (ԲԱ)՝ | Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա.Պետրոսյան |

**1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և հարկային պարտավորությունների գնահատում:
3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

**2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և հարկային պարտավորությունների գնահատում:**

2.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագիր:

2.2 ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «ՍԻԼԵՐ» ՍՊԸ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

**Հիմք ընդունելով 2.1 և 2.2 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.**

1. «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՍԻԼԵՐ» ՍՊԸ-ին ճանաչել **ընտրված մասնակից**:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր՝ փետրվարի 28-ից մարտի 4-ը ներառյալ:

**3.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

3.1Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

**Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ | _____ | Հ. Արչունց |
| Գնահատող անդամներ (ԳԱ)՝ | _____ | Թ. Զաքարյան |
| | _____ | Շ. Հարությունյան |
| Բացող անդամներ (ԲԱ)՝ | _____ | Ա. Իսկանդարյան |
| | _____ | Հ. Մելիքյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | _____ | Ա.Պետրոսյան |